

Պ. Ս. Ս. Ն. Ք.

ՊՈՒԼՈՐԻՍ

Տարեկան 12 Ձր.

Վեցամսեայ 6 Ձր.

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիչը մեկ ծրարով

Տարեկան 14 Ձր.

Վեցամսեայ 7 Ձր.


ԱՍԵՐԻԱ

Տարեկան 2 60 Տօր.

Վեցամսեայ 1. 50 Տօր.

ԿԱՆԽԻԿ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.



Լ Ր Ա Կ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Գ Ա Ղ Ա Գ Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ. ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ. Ա. Ս. Ք.

Редакция


на ВѢСТНИКЪ

«Иравунк»

ВАРՈՒ

Գրութիւնք եւս չեն տրոյիր

ԺԵՍՆ ԹՈՒՐԲԵՐԸ



Մեր նախընթաց թուով արտատպած էինք Երիտասարդ թուրքերու մոլեռանդ մէկ կուսակցութեան գլխաւոր առարկութիւնները պարունակող մէկ ցօղուածը՝ իշխան Սապահեօտինի այն լուսամբիտ առաջարկութեան գէժ՝ որով թուրքիոյ համար ապակեգործանացման վարչական դրութիւն հաստատելու գաղափարը ընդհանրացնել կը ջանար։ Իշխանը լուրջ ուսումնասիրութեամբ և խոր համոզմամբ իր այդ առաջարկութիւնը հրապարակ նետած ըլլալովնա հարկ տեսած է անգամ մըն ալ բացատրել իր ըսածները թերագրք օրկանին մէջ զոր յատկացուցած է ապակեգործանացման գաղափարին տարածման համար։ Իշխան Սապահեօտինի այդ ցօղուածը ուղղակի պատասխան մըն է մոլեռանդ թուրք կուսակցութեան առարկութիւններուն։ Մենք հոս օգտակար կը նկատենք ծանօթացնել մեր ընթերցողներուն այդ պատասխանի խիստ գլխաւոր մասերը։

Մէլլէրէքի խմբագիր Ահմէտ Բիզայի մոլեռանդ կուսակցները իրենց Շոքրաի Խոլէք օրկանով կառարկեն թէ ապակեգործանացման վատ հետեւանք Արեւելեան Ռուսիայի և Կրէտէի ինքնավարութիւն տրուելէն յետոյ տեսանք, մատնանի ընել ուղեւոր թէ այդ երկիրները ինքնավարութիւն ստանալուն յաջորդ օրը իրենց ցեղակից երկիրներուն կցուեցան և թուրքիայէն բաժնուեցան։

Իշխանը կը պատասխանէ.

«Մինչեւ ցարդ մեր հպատակ անուանուած քրիստոնեայ ազգերը իրենց անհատական ձեռնարկներուն մէջ, այսինքն հողադործութեան, արհեստի, վաճառականութեան մէջ իրենց յառաջադիմութեան արգելք չեղող ապակեգործանացման շնորհիւ՝ այնչափ առաջ գացեր են՝ որ այդ ամենին արգելք եղող կեդրոնացման դրութեան տակ կառավարուած տիրող ազգին հետ այ-

սօր բաղդատութեան իսկ չէ կարելի դնել։ Թէ անցելոյն եւ թէ ներկային քոլոր ազգերու պատմութեանց ընթացքին մէջ ապացուցուած ճշմարտութիւն է թէ՛ երբ հպատակ ազգ մը տիրող ազգը կը գերազանցէ ժամանակի հարկմամբ հպատակութեան տիրապետութեան կանցնի կամ գոնէ առջի տիրող ազգէն կը բաժնուի։ Հետեւաբար Կրէտէի և Պուլկարիոյ մահմետականներուն պատահած փորձանքները եթէ չենք ուզեր որ ուրիշ մահմետականներու ալ պատահին, պէտք է որ կարգ մը մոլեռանդ աւանդութիւններու և սին խօսքերու կարեւորութիւն չը տանք և դադարինք մենք մեզի ծափահարելէ և անոր տեղ քննենք թէ ինչու համար քրիստոնեայ ցեղերը մէկիկ ժիկիկ մեզմէ կը բաժնուին և բաժնուելու համար ինչքերնին, արիւնքնին և ամէն բաներնին կը զոհեն ու այս կերպով անկախութեաւ արժանաւորութիւն ցոյց կուտան, մինչդեռ մեր երեսուն տարուան պատմութեան մէջ կոյտ կոյտ աներեւակայի լի ամօթապարտութիւններու հանդէպ մինչեւ վերջին ժամտնակներս մահմետականի մը քիթը գոնէ չարիւնելուն եւ փորձանքին առջեւ առնելու համար բնական ձեռնորոշութիւն մը ցոյց չը տալուն հաւաքական պատճառները քննել ու հասկնալ ջանալու ենք։ Այս անհրաժեշտութիւնը եթէ ժամ առաջ չը գտնենք Աստուած մի արասցէ փորձանքը գլուխէս պա կաս չըլլար։

«Ազգ մը կառավարութեան տատիք ազատութենէն աւելի իր շահածովը երջանիկ կրնայ ըլլալ։ Արդէն արդար կառավարութիւններ անհատական ձեռնարկներու մէջ յառաջ դիմող ազգերու մէջ կը տեսնուին։ Արեւելքի և Արեւմուտքի միջեւ եղած տարբերութիւնը արեւի պէս ակնեւել է։ Առանց արդիւնաբերելու վատնելը ուղղակի գէպի մանկութիւն կը տանի։ Մահմետականներու և քրիստոնեաներու մէջ տեղ էն աւելի ուշադրութեան առնուելիք և փառք Աստուծոյ

առնուելի սկսած կէտը ահա այս է։ Մենք միայն կառավարական պաշտօններու մէջ կը քաջքշուինք կը մնանք կամ գիպաննիս ուրիշներու դարմովը ուռեցնելով իրարմա (Նիգոլութիւն) եղած հոգի կը քաջքշենք, անդին քրիստոնեաները հոգերու տէր կըլլան, և այս հոգերուն վրայ անհատական ձեռնարկներու չնորհիւ հարստութիւն մը կը հիմնենք։ Փաթիհին Պուսոյ պարիսպներուն առջեւ ահարկու երեւութիւն օրերուն Բիւզանդական կայսրութիւնն ալ մեր հիմակուան վիճակին պէս դատարկութեան ու շուայութեան մէջ կը փռէր։ Մոռնալու չենք որ հոռովմէակտն երկրորդ մայրաքաղաքը անկումի մատնողը անհատական ջանքերուն յետադիմութիւնը եղաւ։ Սակայն Փաթիհ Սուլթան Մէհմէտ իր զինուորական յաղթանակը չարաչար չը գործածեց։ Կի մը թուրք աշխրէթը Եւրոպիոյ էն մեծ ժայռաքաղաքներէն միւսին մէջ կարենալ տեղաւորելու համար՝ ուժի յաղթանակին անբաւական լինելը շատ լաւ ըմբռնեց։ Թիւրք քաղաքներու բնակիչներուն ազատ կենցաղավարութեան իրաւունքը յարգեց որով քրիստոնեաներուն ապստամբութեանը քանի մը դար յետաձգուելուն պատճառ եղաւ։ Փաթիհը ինչպէս իբր մեծ զինուոր մը նոյնպէսալ իբրմեծ քաղաքագէտ մը յարգելու ենք։

«Յոյներուն, Հայերուն, Պուլկարներուն մեզմէ գոհ չըլլալուն պէս Բիւրտերը, Արաբները և Ալպաններն ալ մեզմէ գոհ չեն։ առաջին պատեհութեան մեզ զէնք կը բարձրացնեն։ Առաջինները երկրորդներէն տարբերեցնող բանը անհատական ձեռնարկութիւններուն յառաջացումն է։ Ահա այս շնորհիւ քրիստոնեաները պաշտպանողականէն յարձակողականի անցնելով մեծամասնութիւն կազմած բոլոր տեղերին անկախութիւն ձեռք բերին։ Մեր հայրենակիցներէն շատերը այս բանը քրիստոնեաներուն յառաջդիմութենէն աւելի Եւրոպայէ վայելած պաշտպանու-

թիւններուն կը վերագրեն, եւ չեն մտածեր թէ այդ պաշտպանութիւնը երկիրէն չիլաւ։ Բրիտանները ինչպէս երկրագործութեան, արհեստի եւ վաճառականութեան մէջ մեզմէ աւելի մեծ ձեռնարկներուն ցոյց տուին, նոյնպէս ալ իրենց հարստահարած վիճակը պարզելու ազգային իրաւունքնին պաշտպանելու մէջ մեզի հետ չը բաղդատուելու աստիճան ընդունակութիւն ցոյց տուին։ Նախ իրենք իրենց մէջ մեծ քանակութեամբ հրատարակութիւններու հետեւեցան։ այս միջոցաւ իրենց ցեղային ինքնուրոշութիւնը ամրացուցին։ առանձնաչնորհումներու հակառակ կառավարութեան կեղծքումներուն և խայտառակութիւններուն դէմ ապստամբեցան, իրենց ազգային գոյութիւնը եւրոպային ճանչցուցին, մեզմէ շատ աւելի հարուստ ըլլալուն համար հարկ եղած նիւթական զոհողութիւնները ընելէ չը թերացան։ Խմբագիրներ, հեղինակներ զբոսկեցին աշխարհի այլեայլ կողմերը, լսարաններ կազմեցին, քաղաքագէտ անձնաւորութիւններուն հետ յարաբերութիւններու մէջ մտան, մամուլ միջոցաւ հանրային կարծիքը իրենց նըպաստաւոր և մեզ աննպաստ դարձուցին։

Այս հանրային կարծիքի յորդումին առջեւ մեծ պետութիւնները Բ. Դրան նախ խթաններ և ազդարարութիւններ ըրին։ սակայն Եւրոպայի ազդարարութեանց դէմ մեր կառավարութեան բանտարկութիւններով արտօրանքներով և ընդհանուր կոտորածներով պատասխանելը տեսնելով, քրիստոնէից բողոքներուն և ազդողակներուն խիստ արդարացի ըլլալուն համոզուած, մեր երկրին միջամտութիւննին աւելցուցին։ Մոռնալու չենք թէ Եւրոպա ապստամբներու մէջ հիմ մը կանոնաւորութիւն մը, ուժ մը, վերջապէս անկախութեան կամ պաշտպանութեան արժանաւորութիւն մը կամ ձեռնհասութիւն մը չը տեսած մէկու մը

բացարձակ պաշտպանութիւն չը-
քաւ: Եթէ ընէր ալ ոչ մէկ ար-
դիւնք ձեռք չէր բերեր: Կարե-
ւի՞ է ուրանալ թէ երէկ մեզմէ
դատուած ցեղերը այսօր մեզմէ
երջանիկ կապրին:

(Շարունակելի)

ՄՈՒՐԱՍ ՈՒՓԱՅԵԼԱՆ

—*—

Բարեկաններէ ոմանք բերանացի դի-
տողութիւններ կընեն եւ տեղեկու-
թիւններ կուզեն Մուրատ Ռաֆայէլ-
եան վարժարանին արդի վիճակին վը-
րայ գրած տեղեկութեանս տոթիւ, ահա
«առժամայ» պատասխանս:

Միթիւրեան Միւրաճութիւնը Մու-
րատ Ռաֆայէլեան վարժարանը յան-
ձնած է վանքին կրթական էն ձեռնհաս
անձնաւորութեանց: Եթէ կարճ ժամանա
կի մը մէջ մեր յոյսերը պարապը ել-
լին, պիտի ստիպուինք ազգովին հա-
մագոյն: Թէ Սուրբ Ղազարու վանքը,
հակառակ իր փափաքին, անկարող է
քարեկարգ վարժարան մը պահել: Հե-
տեւաբար ալ ազգին կը մնայ խորհիլ
թէ ինչ ընելու է որ այդ կտակները
ապարդիւն չը մնան: Աւելի գէշը՝ վնա-
սակար չըլլան:

Դպրոցին այս օրերուս վիճակին վը-
րայ կարելի չէ որոշ ու ճշգրիտ գա-
ղափար մը կազմել ոչ նպատաստօր,
եւ աննպատօ: Վերջին ամիսներուս
ցնցումէն յետոյ, որ վարժարանին հա-
մար ժամ մը եղաւ, բնականաբար կա-
րելի չէ անմիջական հիմնովին բարե-
փոխութիւններ սպասել: Ամեն բան
կարգի կանոնի մտնելու համար դեռ
քանի մը ամսուան պէտք կայ:
— Ու եթէ ստացուած տեղեկութիւն-
ները կատարելապէս գոհացուցիչ չե-
րենան, առաջինը պիտի ըլլանք աղ-
մուկի ձայնը բարձրացնելու եւ ազգա-
յին վերակուսի անմիջական գործադ-
րութեան միջոցներուն վրայ խորհելու
հրաւերը կարողաւ:

Այդ «վերահսկում»ին պէտքը արդէն
այս էջերուն մէջ զգացնել տուած ենք,
նախ քան գալթակղութեանց պայթու-
ւոր պայթում որ շատ նախատեսելի էր:
Եթէ Միթիւրեանները երկու տարի
առաջ կարեւորութիւն ընծայած ըլլա-
յին իրենց ներկայացուած բարեացա-

կամ դեմոկրատիան, անշուշտ ենք,
թէ նոյեմբերեան դէպքերուն տխրադ-
գեաց հանդիսատէսները պիտի չըլլա-
յինք:

Մաղթենք որ «պատմութիւնը չը
կրկնուի:

Ա. Ա.

(ԼՈՒՍԱՐՅԵՐ)

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Ուրախութեամբ յայտնում ենք որ
Պարսկաստանում Հնչակեան Կուսակ-
ցութեան մասնաճիւղերի Գործադիր
Յանձնախումբը եւ Հ. Յ. Դաշնակցու-
թեան Կենտրոնական Կոմիտէն, իրենց
ներկայացուցիչներին միջոցով միասնիկ
գալով, «Համերաշխ գործունէութեան»
ծրագիրն են մշակել եւ ստորագրել,
պարտաւորեցուցիչ դարձնելով երկու
կուսակցութիւններին Պարսկաստանում
եղող մարմինների համար:

Համերաշխական այդ քայլի հետե-
ւանքն է այն սրտառուչ եւ գեղեցիկ
կոչը, որ Հ. Յ. Դաշնակցութեան Կենտ-
րոնական Կոմիտէն եւ Հնչակեան մաս-
նաճիւղերի Գործադիր Յանձնախումբ-
ը միասին ուղղել են յեղափոխական
«ԸՆԿԵՐՆԵՐ»ին:

Մեր սրտագին խնդակցութիւնը այդ
մասին եւ ջատագովանքները համե-
րաշխութեան այդ ծրագրի աշխատա-
ւորներին:

(Հնչակ)

ԱՂԲԱՑ ԱՌՆԱՄԸ

ԱՂԲԱՍԽԱՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՎԱՐՆԱՅԻ

Թիւ 47



Պատ. Խմբ. «Իրաւունք»ի

Աստ

Ընկերութիւնս շնորհակալութեամբ
ստացած է հետեւեալներն 1906 Նո-
յեմբերէ մինչ 1907 Յունվար 8.
Տեարք Օ. Բարսեղեանէ նուէր 2 ֆր.
» Ա. Նահապետէ » 1 ֆր.
» Ս. Ինճիթեանէ » 1 ֆր.
» Ս. Քիւրտեանէ » 10 ֆր.
» Գ. Սահառեանէ » 5 ֆր.
Ա. Փաշաեանի սրճ. գանձանակէ 1,40
Մուրատ եղբոր » » 13,—
Գ. Միքայէլեանի » » 6,60

աղետալի երեւոյթը: Բայց չուզեց խը-
ռովել զինքը: Խորին լուսթեամբ մը
սպասեց որ ծերունին խօսէր:

Արդարեւ, Ֆուստ պէյ երկար մը-
տածումէ մը ետքը, հոգին լեցուած
վշտահարի մը պէս հառաչանք մը հա-
նեց ու ըսաւ.

— Ա՛խ, Նուրիմէ՛, կեանքիդ պաա-
մութիւնը շատ աղետալի է: Չեմ կար-
ծեր թէ երկրիս վրայ գտնուի մարդ
մը, որ տառապած, չարչարուած՝ ու
յեանքն ծայր թշուառութեամբ անցու-
ցած ըլլայ իր կեանքն ինծի պէս...
Այդ պատճառաւ աւելորդ է յիշել զայն:
Ի՞նչ պէտք է տրեւի փոթորիկներու
ներքեւ ճղակտոր եղած ծառի մը վը-
րայ:

— Կը խնդրե՛մ, Ֆուստ պէ՛յ, ընդ-
հատեց Նուրիմէ. պատմեցէ՛ք ձեր
կեանքը: հետաքրքիր եմ ու բոլոր հոգ-
ւովս կը փափաքեմ իմանալ:

Ֆուստ պէյ, որ սկսած էր անսահ-
ման սէր ու հոգածութիւն ունենալ
Նուրիմէյի վրայ չը կրցաւ ծածկել իր
աղետալի պատմութիւնը: Խորին «ՕՖ»

Շրջուն գանձանակէ ձեռամբ Ս. Աղա-
եանի 26, 60 • Շրջուն գանձանակէ ձե-
ռամբ Տիգրան Դարիպեանի եւ Կարա-
պետի 77, 28 • Շրջուն գանձանակէ ձե-
ռամբ Գէորգ Խանճեան եւ ընկ. 42 22 •
Շրջուն գանձանակէ ձեռամբ Հ. Քի-
րիշեանի 9, 46 • Շրջուն գանձանակէ ձե-
ռամբ Ղ. Ասլանեանի եւ Ա. Դարաքաշ-
եանի 65, 11 • Շրջուն գանձանակէ ձե-
ռամբ երկու երիտասարդաց 30, 3 •
Շրջուն գանձանակէ ձեռամբ Սարգիս
Կարապետեանի չորս շարաթուան 80, 32
Ընդհանուր գումար 371 ֆր. 01 անդ.

Ի դիմաց Գործ. Ժողովոյ
Վառնայի Աղքատախնամ Ընկ.
Ատենադպիր Ատենապետ
Օճնիկ Աղաւեսան Գ. Կարապետեան

• •

Աղքատախնամ Ընկերութեան Գործ.
Ժողովի անդամները իրենց անձնական
զբաղումներուն պատճառաւ չի կարո-
ղանալով օգտակարապէս ծառայել ըն-
կերութեանս, իրենց հրաժարականը
տուած էին Ընդ. Ժողովոյ դիւանին՝
թուականէս մէկ ամիս առաջ, եւ կը
խնդրէին որպէսզի ընդհ. ժողով գումար-
ը նոր ընտրութեան ձեռնարկելու հա-
մար. բայց նկատելով որ Դիւանը մին-
չեւ ցարդ չէ կատարած իր պարտա-
կանութիւնը, ստիպուած կուզածք հրա-
ւերել ընկերութեանս յարգոյ թաժա-
նորդները ընդհ. ժողովի յառաջիկայ
կիրակի 21 յունվար կէս օրէն վերջը
ժամը 2ին Աղքային վարժարանի մէջ,
օրակարգ ունենալով.

1) Համարատութիւն Գործ. Ժողովոյ
2) Ընտրութիւն նոր Գործ. Ժողովոյ

Ի դիմաց Գործ. Ժողովոյ
Վառնայի Աղքատախնամ Ընկ.
Օ. ԱԴԱՄԵԱՆ Գ. ՍԻՄՈՆԵԱՆ
Վառնայ 12 Յունվար

Ռուսճուրի Աղքատախնամ Ընկե-
րութիւնը 1906 Դեկտ. ամսոյ մէջ
վարժարանի երկսեռ աղքատ ուսանո-
ղաց հագուստ եւ կօշիկ չինել տալու
համար իւր դիմումը բրած Մեծ. Տիարք
վաճառականներէն հետեւեալ նուիրա-
տուութիւնները ստացաւ.
Տ. Եղբ. Ասլանեան 21 մէթր կերպաս
տղայոց հագուստի համար. Տ. Սար-
գիս Գուրաճեան 3 թօփ պահէթ (109
մէթր) աղջկանց եւ 17 մէթր 10 անդ.
տղայոց համար. Տ. Կրօնիկ Փափազ-

մըն ալ քաշեց սրտէն ու ահա՛ ինչ որ
յայտնեց.

«Ես ազնուական ընտանիքի մը կը
պատկանեմ. Նուրիմէ՛, իմ երկիրս
շատ հեռու է... ա՛խ, լեռներէ, սարե-
րէ, անազին մղոններէ ալ անդին է:
Այսօր իմ բազմաթիւ սիրելիներէս ոչ
մէկը մնացած է, եւ առոր պատճառը
միմիայն՝ այն մարդուն հայրն է. որուն
սեմերէն ներս տարիններէ իվեր ոճիւր,
արիւն ու հարեմական գարշութիւններ
կը բուրեն...»

«Մի՛ դողար աղջիկս, մի՛ սար-
ստար... մեր երկուքիս ճակատագիրն
ալ համանման է: Դուն ալ ամբողջ ըն-
տանիք մը զո՛հ տուած ես այս մար-
դուն ես ալ... միայն թէ ի՞նչ նպատա-
կով որ ես ստիպուած եմ իմ սիրելի-
ներուս արեւը խմող ոճրագործի մը
քով գտնուիլ, դուն այդ նպատակէն
հեռու ես...»

Նուրիմէ չը կրնալով իր հոգւոյն
դառնութիւնը զսպել, բացազանջեց.

— Ի՞նչ նպատակով կը գտնուիք այս
մարդուն ապարանքը:

եան 1 թօփ պահէթ (44 մէթր) Տ. Նշան
Պէղազեան 1 թօփ պահէթ (40 մէթր)
Տ. Եղբ. Քիւրտեան 1 թօփ պահէթ
(52 մէթր) • Տ. Լեւոն Սթամպուլեան
10 մէթր պահէթ աղջկանց • Տ. Յակոբ
Աճէմեան 1 թօփ ամերիքան (24 մէթր)
Տ. Յարութիւն Մանուկեան (գործարա-
նատէր) նուէր 30 ֆր. • Տ. Եղբ. Քէս-
տանեան 5 ֆր. • Տ. Եղբ. Թիմուրեան
15 ֆր. • Տ. Եղբ. Սէթեան 5 ֆր. • Տ. Չա-
րուկ Խաչուճեան 5 ֆր. • Տ. Պողոս Մէ-
ճէլեան 2 ֆր.

Որով սոյն նուիրատուութեամբ Աղ-
քատախնամ Ընկերութիւնը կարողացաւ
չինել տալ 50 զոյգ կօշիկ երկսեռ. 48
հագուստ տղայոց եւ 18 աղջկանց:

Ուրեմն աղքատախնամ Ընկերու-
թիւնս ի դիմաց աղքատաց հրապարա-
կաւ իր խորին շնորհակալութիւնը կը
յայտնէ:

Ի դիմաց Աղքատախնամ Ընկ.
Ատենադպիր Ատենապետ
Խ. ՄԱՉՄԱՆԵԱՆ Թ. ՓԱՓԱՉԵԱՆ
Ռուսճուր 8 Յուն.

ՄԱՇՈՅ ՎՐԻ ՓԱՓԱՉԵԱՆ ԿԱՐԳԱՌՈՂ ԵՂԱՄ

Արմաշի գալերվանքի նախկին
միաբաններէն Մաշիոց Վ. Փա-
փաչեան որ վերջերս Ամերիկէն
Պարսկաստան եւ Կովկաս գնացած
էր եւ մի քանի ամիս առաջ ուռու-
կառավարութեան հրամանով
Ռուսիայէն հեռացուած եւ Պուլ-
կարի անցած էր, անկէ ալ կը-
նոյ մը հետ Ամերիկայ վերա-
դարձեր եւ հետեւեալ գրութիւնը
չրկեր է Ամերիկայի Առաջնորդ-
Գեր. Սարաճեանին.

«Գերաշնորհ Տ. Յովսէփ Սըր-
բաշան Արքեպիսկ. Ամերիկայի.
Ստորագրեալս, երբեմն Մաշ-
իոց վարդապետ Փափաչեանց»
Միաբան Ս. Էլմիսթինի, երէկ հա-
սած եմ Ամերիկայ, իրքեւ սուկ
աշխարհական, եւ այս թղթով պա-
տիւ ունիմ Ձեր Գերաշնորհ Սըր-
բաշութեան— իրբեւ Ամերիկայի
Արքեպիսկոպոսին— յայտարարել
իմ ձրաժարիչս կոռուկրոն հոգե-
տրակաւորեալս աւտիճանէն՝ իմ

— «Համբերէ՛, աղջիկս, նկատել
տուաւ ծերունին: Ի հարկէ խոստումս
պիտի կատարեմ: Քանի որ ստիպել
տուիք ինծի կեանքս էն աղետաւոր
երեւոյթներէն մին յայտնելու, ալ
վստահ եղիք որ մէկիկ մէկիկ պիտի
պարզեմ: Ա՛խ, արդէն տառապած հո-
գի մը պէտք ունէի, արդէն դառնու-
թիւնը լեցուած էր մէջս ու պարպել
կուզէի:

«Ըսի թէ նպատակ մը ունիմ, ու-
րուն դադափալը, միջոցը, նոյնպէս
գործադրութիւնը աղետաւոր է, սա-
կայն բովանդակ կեանքս անոր կապ-
ուած է... չեմ կրնար անջատուիլ...
ճամբայ մըն է, որուն վերջաւորու-
թիւնը փոս մը եւ կամ անյիշատակ
գերեզման մըն է: Բոլոր այս գեղեցիկ
տիեզերքը բան մը չէ... աշխս միայն,
այո, միայն մէկ տեսարանի վրայ յա-
նած եմ ու՛ ճարգին շուրջը դարցող
թիթիւնիկին պէս, անոր գերին եղած
եմ:

յոժար և ազատ կամքովս ինձ կը վերապահեմ մօտիկ ապագային թէ՛ հրապարակով եւ թէ՛ Զեր Սրբազնութեան բացատրել իմ պատճառաբանութիւնները :

Այս մասին կը գրեմ նաեւ Ամենայն Հայոց վեհ. Հայրապետին. Ուստի այսուհետեւ կամ և կը ձաւ իմ մկրտութեան անունով,

Յարգանք

Ներսէս քափազեանց

Գոթերն 26 դեկտ. 907

(Արմէնիա)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կեսարիոյ Մուհամմատը զիւզէն Տաքէս անուն աղքատ երիտասարդ մը պանդխտութեան մէջ գտնուած միջոցին, ասկէ երկու տարիի շափ առաջ նոյն գիւղի քահանան Տէր Պետրոս քանի մը արբանեակներով միասին 16 ու կէս ոսկոյ փոխարէն, անոր կիներ կը պահէ Մուհամմատը անձի մը հետ: Տաքէս իր գիւղը վերադառնալով կը գտնէ իր կիներ ուրիշ մը թելեւորուն թառած շնորհիւ ապաշնորհ տէր-պապային:

Պոյսոյ թերթերը խիստ անօրինութիւն կը պահանջեն Տէր Պետրոսի դէմ: Սպասելով կրօն. Ժողովոյ վճռին, նոյն պահանջը պիտի ըլլայ Մ. տէրաւորին նոյնանման ծանօթ գեղծութիւն համար:

— Ատանայի առաջնորդը նորապսակ Մուհամմատը Եպիսկոպոս նամակաւ մը կրօն. Ժողովին յայտնէր է թէ ինք կրօնական նոր կարծիքներու պաշտպան է այսինքն Հայ Եկեղեցւոյ շատ մը հին սովորութիւնները ծէսերը ու արարողութիւնները չի յարգեր եւ նոյն իսկ եպիսկոպոսական չափաքան ու եւ միջոցներով որոնք մեր եկեղեցւոյ մէջ եպիսկոպոսութեան արտաքին նշանները կը համարուին, կարծամարէ եւ վրայէն նետել կուզէ:

— Դավթէմէ «Արմէնիա»-ի կը գրեն հետեւեալը. «Ատրպատականի նոր նշանակուած Առաջնորդը Տ. Եղնիկ եղ. Ապահուեն, որին այնքան մեծ ընդունելութիւն արեցին իբր երկուս միմի առաջ երբ Դավթէմէ եկաւ, անցած շաբաթ յուսահատած իր հրաժա-

րականը հետագրով ղրկեց վեհ. Կաթողիկոսին որ սակայն չընդունեց:»

— Պոյսո փաշա Նուպար արտօնած է «Լուսաբեր»-ը յայտարարելու թէ սխալ է այն լուրը որով կիմացուէր թէ Մանչէսթըրի մէջ կազմուած հայկական զբոսաւորուն մը հաստատող խմբակին Պոյսո փաշա ալ մասնակցած է: Փաշան ըսեր է թէ ինք Մանչէսթըրէ հեռու գտնուելուն պատճառաւ չէր կրնար գործնականօրէն մասնակցել այդ հաստատութեան:

— Կովկասահայոց կրթական գործերու ղեկավարութեան մասին վեհ. Կաթողիկոսին մէջ նոր կոնգրակը կը հրատարակեն Տփղիսի թերթերը: Մշակ կոնգրակին մէջ մասը անպատակաւ յարմար կը գտնէ:

— Կովկասի քանի մը քաղաքներու հայ եկեղեցիներուն մէջ նոր մեռած Մուհամմատի տոբի համար հոգեհանգստեան մաղթանք կատարուեցան ի ներկայութեան Պարսից հիւպատոսներուն եւ պարսկահպատակ մահմետականներուն:

— Կովկասահայ արկածելոց նպաստ հաւաքելու պաշտօնով կազմուած շէր-ջուռն յանձնախումբը Մոսկուա գացած եւ հոն Միսական Ընդհանուր Ժողովը գումարած է: Կը սպասուի որ Մոսկուայի հայերը մօտաւորապէս 70000 ռուպլի նուիրեն:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ատրպատականի փոխարքայ գահաժառանգի թէհրան մեկնելուն պատճառաւ նահանգին կառավարութիւնը յանձնուած է իշխան Իմամկուլի-Միրզային:

— Թէհրանէ կը հեռագրեն թէ նոր Շահը հիմնաւորապէս ծանօթացաւ իրաց կացութեան. առայժմ նա կը խուսափի նոր պաշտօնեաներ կարգելէ ու տեղափոխելէ: Թէեւ թագադրութիւն չի կայ, սակայն ծէս մը կայ որ կը յիշեցնէ թագադրութիւնը: Շահը շրջապատուած բարձր պաշտօնեաներէ կը նստի գահին վրայ եւ գլուխը կը դնէ Հնդկաստանի քաջադաշտ, նստի Շահի թագը. այդ վարկեանէն նա բոլոր կրօնական եւ տնտեսական իրաւունքներու ժառանգորդը կը համարուի: Այս արարողութիւնը մօտ օրէն պիտի կատարուի:



— «Ախ, Նուրիմէ, շարունակեց Զուլատ պէյ, ես ազգով չէրքէջ մընեմ: Իմ նախահայրերէս ժառանգած ցեղապետութեան շնորհիւ մեծ դիրք ու ազդեցութիւն ունէի բոլոր գաւառին մէջ: Բարի եւ աղքատասէր ըլլալու, ամենուն անձնութիւնները արժանի եղած էի: Տունս չէն ու դուռս բաց էր:

«Աստուած երեք գաւակ ու շնորհալի կին մը տուած էր ինծի:

«Կինս գեղանի էր ու չափազանց կը սիրէր զիս: Երջանիկ էինք ու խնդուէրէն մեր ապարանքին մէջ անո շահաւորութիւն մը պէս կը թրթար:

«Ամուսնութեան ունեւորութիւնը տարին էր: Իրիկուն մը լուր արուեցաւ ինծի թէ նահանգին կուսակալը շատ մը ձիաւորներով այցելութեան կուգար: Ախ, կառավարութեան մարդերէն շատ չէի ախորժեր: Անոնց գալուստը միշտ հոգեկան արտաճութիւն մը կը դառնար ինծի: Այդ պատճառաւ՝ կուսակալի այցելութիւնը միեւնոյն տըրտմութեան մէջ զբաւ զիս: Բայց ասիպ-

ՊԱՏՏՈՒԱԿԱՆ ԱԶԳ

Վերջերս եգիպտոս կամ այլուր հրատարակուող մէկ քանի թերթեր «Ազատ Բեմ»-ը վեր. Հնչկուսակցութեան եգիպտոսի պաշտօնական օրականը նկատեցին ինչ որ սխալ է:

Արդ, Աղէքսանդրիոյ մասնաճիւղի Ընդհանուր Ժողովը իր նիստին մէջ նկատողութեան առնելով սոյն խնդիրը՝ որ արդէն ասկէ առաջ Մասնաճիւղիս վարչութեան կողմէն քանիցս անգամ դիմում եղած է եգիպ. Նահանգ. վարչութեան՝ որպէսզի հերքէ այդ սխալ յայտարարութիւնները, սակայն ապարդիւն մնացած ըլլալով՝ Ընդհ. Ժողովս միաձայնութեամբ կուգայ հերքել թէ՛ «Ազատ Բեմ»-ը եգիպ. վեր. Հնչկականներու ոչ պաշտօնական և ոչ ալ կիսապաշտօնական օրականը եղած է և չի կրնար ըլլալ (*):

Ի Դիմաց Ընդհ. Ժողովոյ Ատենադպիր Ատենապետ թ. Վրէժ Կորիւն

Յ. Գ. Սոյն աղդէն մէկ օրինակ ալ «Լուսաբեր»-ին ղրկուած է:

(*) ԴիՏ. ԽՄԲ.— Արդեօք այս «Աղդ»-ը բաւական է ակներեւ եղածը սքողելու:

ՊԱՏՏՈՒԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգ. վարժարանաց հոգարարձուութիւնս ի նկատի առնելով վարժարանին մէջ ընկերութեանց հաւաքումներէ ծագելիք զանազան անպատեհութիւնները, ներկայիս կը փութայ յայտարարել վստահայի հայ հասարակութեան թէ որոշած է այլ եւս արգիլել այդ տեսակ հաւաքումները: Ազգ. վարժարանաց մէջ, որ ընկերութեան եւ ինչ առիթի մէջ ալ եղած ըլլայ այդ:

Հոգարարձուութիւն Վառնայի Ազգ. Երկսեռ վարժարանաց

ուած էր համակերպիլ ու, իբրեւ ցեղապետ մը, գիմառնել զինքը:

«Կուսակալը տունս իջաւ: Անունիս ու ազգանունս վայել ամեն յարգանք, ամեն մեծարանք, ամեն պատիւ ըրի: Տասնօրէն աւելի նստեցաւ: Մեկնած պահուն կեղծ ձեւակերպութեամբ մը ըսաւ:

— Զուլատ պէյ, բարեբք անմոռանալի պիտի ըլլայ ինծի: Կը յուսամ թէ ասկից ետքը շատ անգամներ պիտի տեսնուինք ու իրարու մտերմութեանը պէտք պիտի ունենանք: Ու ես անփոխարինելի պատիւներուց տեղը պիտի կարենամ լեցնել: Կայսերական բարձր շնորհաց արժանացնելով քեզ:

«Մեկնեցաւ...»

«Բայց գաղանի մը նայուածքով ու հրէշի մը տրամաբանութեամբ մեկնեցաւ:

«Ախ, կնոջս չքնաղ գեղեցկութիւնն իր հոգին յուզած էր, հետեւաբար քանի մը օրէն հրաւէր մը խրկեց ինծի որ իր քովն երթայի: Միամտօրէն

ՈՐԲՍԸ

Առողջ կազմով գեղադէս եւ 5 տարեկան որր տղայ մը հոգեգաւակ տալ կուգուի պարկեշտ ընտանիքի մը:

Առնել փափաքողը կրնայ դիմել Տ. Յարութիւն Իշխանեանի Շուկա:

ԿՈՒԶՈՒԻ

Շուկայի համար կուգուի երաժիշտ դասատու մը որ ազգ. վարժարանին մէջ դասախօսէ ալ:

• •

Ազգ. վարժարանի մը համար կարող ուսուցիչ մը կը փնտռուի բաւական գոհացուցիչ ամսականով:

Դիմել Խմբագրութեանս

• •

Քաղաքիս Ս. եկեղեցւոյն համար կարող ժամակուչի մը պէտք կայ. պայման է ամուրի ըլլալը. գոհացուցիչ ամսական, փափաքողը ընդ հուշ ներկայանան ի խորհրդարան:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՊՈՒՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. » Բ. » [433 էջ] 2 ֆր. ՆՈՐ ԵՐԳՈՒՐԱՆ կամ ՄՐՈՒՆԶ ՀԱՅԿԱԿԱՆ երկրորդ անգամ տպագրուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկար-ներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութեան առաջ. Գին 50 ամսգին

ՀԱՅԵՆԻՔԻ ԶՈՂՆԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն: Զեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմել ՎԱՌՆԱ «Ի Ր Ա Ն Կ»-ի խմբագրութեան

ՏՊԱԳՐԻՉ Մ. ԳԱՆՔԱՔՃԵԱՆ

որ ժամանակէ մը ի վեր քաղաքէս հեռացած էր, այս պահուս կրկին Վառնա վերադարձած է եւ ըստ առաջնոյն կը շարունակէ իր տպագրական արհեստը:

Ելայ գացի: Ընգունելութիւնը գտն թողուց զիս:

«Այն օրը, Նուրիմէ, այն օրը կեանքիս էն աղէտալի օրն, եղաւ:

«Իրիկունս դէմ հրէշ կուսակալը չորս ձիաւորներ կը խրկէ տունս ու բերել կուտայ կինս ու գաւակներս, առարկելով որ ես պատուիրած էի:

«Առանց ինծի իմաց տալու, թէ զաւակներս եւ թէ կինս տպարանքին անջատուած բաժնին մէջ պահել կուտայ: Դիմելով կնոջս սենեակը կը մտնէ... ու բռնութեան տակ կը լլկէ զինքը: Բայց կինս կամք չի տար: Ամեն ճիգ կը թափէ գիմաղրելու: Այդ պահուն կուսակալին թիկնապահներէն մին, որ ներքնապէս անհաշա տեսնութիւն մը ունէր անոր նկատմամբ, կիմանայ այդ գարշելի չարագոծութիւնը ու քովս կուգայ: Խնդրեմ կը հասկցունէ:

(Շարունակելի)

